ԳԼՈՒԽ ԼԹ.

Աքսորումն Մուսայ Դատաւորին ։ Ընդդիմութիւն Լատինաց վասն Ճանապարհի ։ Պահանջ Քաղաքապետին ։ Քեահեայ Կուսակալին եւ բանութիւն նորին ։ Բողոք Հայոց վասն այնր ։

ՄՈՒՍԱՅ Էֆէնտի Խալիտի յորժամ կարգեցաւ Դատաւոր Երուսաղէմի փոխանակ Մուսաննըֆի աքսորելոյ, յանձն եղեւ նմա կատարել զգործս Հայոց ըստ հրամանի Արքային ․ Նուրի Էֆէնտի 'ի դէպս ինչ վշտացեալ 'ի նմանէ, մի՝ զի միշտ 'ի կողմն Յունաց հակեալ էր, երկրորդ՝ ոչ կամեցաւ յայտնել նմա զգաղտնիս իւր, և այնպէս խէթ 'ի սրտի մեկնեցաւ յԵրուսաղէմէ ։ Հայք 'ի Կոստանդինուպօլիս ամբաստան լինէին զնմանէ՝ թէ զոմանս 'ի գործոց անտես արար և զոմանս թերի եթող, և Նախիպ քաղաքին թշնամացեալ ընդ նմա՝ չարախօս լինէր 'ի Կոստանդինուպօլիս 'ի ձեռն Քիլիսցի Օսման Էֆէնտեայ ուրուք ։ Պօղոս վարդապետ գրէր անտի յԵրուսաղէմ չխաբել 'ի բանս նորին և չանկանել տարապարտ 'ի տուգանս, զի անպատճառ ունէր շարժել աշտանակ նորա յԵրուսաղէմէ ․ բայց գրեանք մեծի Դեսպետին և այլոց մեծամեծաց հաստատէին լինել նորա Փոխանորդ Դատաւորի նոր տարւոյ, և պահանջէին 'ի նմանէ 55,000 դահեկան փութանակի առաքել իբր ծախս ։ Ընթերցեալ Դատաւորին զայսոսիկ գրեանս, կոչեաց զոմանս 'ի Հայոց և ասէ՝ իշխանութիւնս այս յօդուտ ձեր է՝ զի Դատաւորն գոլով անտեղեակ հանդամանաց գործոյն, եւ թելադրութեամբ թշնամեաց ունի նեղել զձեզ և տագնապել, զի ոչ կարէ ընդդէմ կալ բռնութեան Կուսակալին, ուստի պարտ է ձեզ յանձն առնուլ վճարել փոխանակագրով զգումարն զայն 'ի թագաւորեալ քաղաքին եւ ես աստ սակաւ առ սակաւ հաշուեցից զայն փոխարէն պարգեւաց եւ այլոց տրոց և գործոց՝ զորս ունին Դատաւորք 'ի ձէնջ ․ զի եթէ ոչ հաճիք՝ ազդ արարից Յունաց, զի նոքա յօժարութեամբ ընդունին, յայնժամ պարտաւորիմ գործել 'ի նպաստ նոցա և 'ի վնաս ձեզ ։